



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՍԱՐԳԻՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԻ ՄԱՏՐԱՆ ԵՒ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ

Ս. Սարգիս Զօրավարի տօնը շարժական տօն է, կը զուգադիակի Յունուար 11-Ը Փետրուար 15-Ի միջեւ ու կը հետեւի Առաջաւորաց Եռօրեայ պահքին, որ հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին կողմէ:

Առաջաւորաց պահքին առիթով եւ Ս. Սարգիսի տօնին շաբթուան սկիզբը, ուխտաւորներ երեք օր ծոմ կը պահեն ու կ'աղօթեն, որ Ս. Սարգիսը իրականացնէ իրենց ուխտը:

Այս տարի, տօնը յառաջիկայ շաբաթավերջին է, 7 Փետրուարին: Ծոմապահութիւնը կը սկսի Կիրակի, Փետրուար 1-Ի կես գիշերին եւ կը շարունակուի մինչեւ Չորեքշաբթի, Փետրուար 4:

Չորեքշաբթի առաւոտեան, Թեմիս բոլոր Եկեղեցիներուն մեջ Առաջաւորաց պահքի խաչականգիստ եւ ջրօրինեք պիտի կատարուի, որմէ ետք հաւատացեալ ծոմապահները Ս. Հաղորդութիւն եւ օրինուած ջուր պիտի ստանան:

Յառաջիկայ ծաբաթ, Փետրուար 7-ԻՆ, Երեկոյեան ժամը 6-ԻՆ, Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» Մատրան մեջ, տեղի պիտի ունենայ 2009 տարուան առաջին Ս. Պատարագը, որ կը զուգադիակ Սուլը Սարգիս Զօրավարի տօնին: Ս. Պատարագը պիտի մատուցանե Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արք. Տ. Կոմիտաս Քիև. Թորոսեան:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 7:30-ԻՆ, Երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մեջ: Իսկ Կիրակի, Փետրուար 8-ԻՆ, Ս. Սարգիս Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ, Առաջնորդ Սրբազնը Ս. Պատարագ պիտի մատուցանե, եւ մատաղորինեք պիտի կատարէ Ս. Սարգիս Եկեղեցւոյ մեջ:

CELEBRATING THE FEAST OF ST. SARKIS

According to our Church calendar, this year the Feast of St. Sarkis falls on Saturday, February 7th. The Feast coincides with a three day fast, the Fast

of the Catechumens, which begins at midnight on Sunday, February 1st and ends on the morning of Wednesday, February 4th.

On Wednesday morning, services will be offered at all churches, during which the blessing of water will also take place and Holy Communion will be offered.

The first Divine Liturgy of the year at the Prelacy "St. Dertad and St. Ashken" Chapel will take place on the day of the Feast of St. Sarkis on Saturday, February 7th, at 6:00 p.m. The celebrant is Rev. Fr. Gomidas Torossian. H.E. Archbishop Moushegh Mardirossian⁵ Prelate, will preside over the ceremony.

In the same evening, at 7:30 p.m., evening services will take place at St. Sarkis Church in Pasadena.

On Sunday, February 8th, His Eminence the Prelate will celebrate Divine Liturgy at St. Sarkis Church in celebration of the name day of the Church. The Prelate will also preside over the blessing of *madagh*.

ՅՐԱԺԵԾ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ ՅԻՒՊԱՏՈՍ ՄԵԾԱՐԳՈՅ ԱՐՄԵՆ ԼԻԼՈՅԵԱՆԻ

Լու Անճելըսի մեջ Յայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Մեծարգոյ Արմեն Լիլոյեան ի մօտոյ կ'ամբողջացնէ իր պաշտօնավարութեան շրջանը ու հայրենի պետութեան տնօրինումով, պիտի վերադառնայ Յայաստան:



Այս առիթով,
Հ.Յ.Դաշնակցութեան Արեւմտեան Սիացեալ Սահանգներու Կեդրոնական Կոմիտեն Չորեքշաբթի, 28 Յունուարի Երեկոյեան կազմակերպած էր ողջերթի Երեկոյ մը, որ տեղի ունեցաւ Կլենտեյլի «Ֆենիսիա» ճաշարանին մեջ: Ներկայ եղան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգինեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարո Յակոբեան, Յայ Կաթողիկէ եւ Աւետարանական հարանուանութեանց հոգեւոր առաջնորդներ, կուսակցական ու միութենական ներկայացուցիչներ:

Առաջնորդ Արքազանը, ողջերթի իր խօսքին մեջ, բարձր գևահատեց հայրենի դիւնագետին ծառայութիւնը, շեշտելով, որ ան իբրեւ պաշտօնատար ու անհատ հայ՝ բազմաթիւ առաջնութիւններ կը մարմնաւորէ ու զանոնք դրած է ի սպաս մեր հայրենիքին, հայութեան ու հայրենիքին հետ արտերկրի հայութեան կապերու ամրապնդման: Ան յաջողութիւն մաղթեց Տիար Լիլոյեանի, այս կստահութեամբ, որ ան նոյն

ոգիով ու յանձնառութեամբ պիտի շարունակէ իր ծառայութիւնները՝ ո՛ւր որ ալ գտնուի եւ ինչ պաշտօն ալ որ ստանձնե:

Նոյն առիթով, Յինգշաբթի, 29 Յունուարի երեկոյեան, Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանս կազմակերպած էր ողջերթի սեղմ ընդունելութիւն մը, որ տեղի ունեցաւ Սանթա Մոնիքայի «Փեսիֆիք Տայնին Զար» ճաշարանին մէջ: Յիւրընկալս էր Ազգ. Առաջնորդարանին բարերարներէն Տիկին Աշխեն Փիլաւան: Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան դիւանի անդամներուն կողքին՝ ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքինեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգեն Յովսեփեան, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան միաբան հայրեր եւ հիւրընկալ ընտանիքի անդամներ:

Յանդիպումը անցաւ սրտբաց ու մտերմիկ մթնոլորտի մէջ: Առաջնորդ Սրբազանն ու ներկաները շնորհակալութեան ու գևահատակի արտայայտութիւններ ունեցաւ հայրենի դիւանագետին նուիրեալ ծառայութեան ու ազնիւ գործակցութեան մասին, շեշտելով, որ անոր պաշտօնավարութեան տարիները իբրև բարի գործակցութեան իրայատուկ շրջան պիտի գումարուի Թեմիս տարեգրութեան ու առհասարակ Յայաստան-Սփիտոք գործակցութեան պատմութեան մէջ:

Տիար Ա. Լիլոյեան, իր կարգին, շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Առաջնորդարանին ու ընդիհանրապէս մեր գաղութի հայկական միաւորներուն, նշելով, որ անոնց հետ ունեցած է սերտ ու յիշատակելի գործակցութեան շրջան մը: Ան վեր առաւ Քալիֆորնիոյ հայկական գաղութի դերս ու նուիրուածութիւնը՝ Յայրենիքի ծառայութեան տարրեր ասպարեզներուն մէջ, եւ Վստահութիւն յայտնեց, որ ստեղծուած կապերը տարուէ տարի աւելի եւս պիտի ամրապնդուին ու տարածուին նոր կալուածներու վրայ, ի սպաս Յայաստանին, հայրենի բոլոր շրջաններուն ու Յայրենիք-Արտերկիր յարաբերութեանց:

Բաժանումի պահուն, Առաջնորդ Սրբազանը Տիար Ա. Լիլոյեանի յանձնեց յուշանուեր մը:

FAREWELL RECEPTION FOR OUTGOING CONSUL GENERAL ARMEN LILOYAN

On the evening of Wednesday, January 28th, the Central Committee of the ARF had organized a farewell reception for outgoing Consul General the Honorable Armen Liloyan, who will soon be returning to Armenia as his term comes to an end. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the reception, which took place at "Phoenicia" Restaurant in Glendale, along with Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikijian, Executive Council Chair Dr. Garo Agopian, Armenian Catholic and Evangelical Church leaders, and members of community organizations. During the reception the Prelate commended the Consul General's service and wished his success in his future endeavors.

The Prelacy had also organized a farewell reception for the Consul General which took place on the evening of Thursday, January 29th, at "Pacific Dining Car" in Santa Monica, hosted by Prelacy benefactress Mrs. Ashkhen

Pilavjian. Alongside the Prelate and Executive Council divan members were Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikijian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian, members of the Pilavjian family.



and cooperation during his term. He spoke highly of the commitment and contributions of the Armenian community of California to their homeland, expressing confidence that Armenia-Diaspora relations will only get stronger with each passing year.

At the conclusion of the reception the Prelate presented the Consul General with a memento.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՆՈՐԱԿԱՉՄ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՆՉԱԱԽՈՒՄԲԸ

Ծանօթ է որ տարեսկիզբին, եւ ընդառաջելով շրջանի հայութեան խնդրանքին, Արեւմտեան Թեսի Ազգային Առաջնորդարանը ծխական նոր համայնք մը հաստատեց Նորթ Հոլիվուտի հայաշատ շրջանին մէջ: Առաջին Ս. Պատարագը տեղի ունեցաւ Ս. Ծննդեան Տօնին օրը, իսկ այսուհետեւ, ամեն Կիրակի յետմիջօրէին, Ս. Պատարագ կը մատուցուի Նորահաստատ Եկեղեցւոյ մէջ:



Ծխական շրջանի աշխատանքները յառաջ տանելու համար, նշանակուած է ծխական յանձնախումբ մը, որ կը գործէ շրջանի հոգեւոր մատակարար Գերա. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեանի, Ազգ. Վարչութեան Ներկայացուցիչ Տիառ Կարօ Եշկիանի եւ այլ անդամներու կողքին:

Յանձնախումբի
անդամները Երեքշաբթի, 27
Յունուարի Երեկոյեան այցելութիւն մը տուին Ազգային Առաջնորդարան եւ

ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան կողմէ:

Յիւր անդամները գեկուցեցին ծխական համայնքի կազմութեան նախընթաց ու վերջին շաբաթներու աշխատանքներուն մասին: Անոնք հաստատեցին, որ շրջանի հաւատացեալ ժողովուրդը արդեն իսկ սերտ կապ ունի Եկեղեցւոյ հետ, Ներկայ կ'ըլլայ արարողութեանց ու մանսակցութիւն կը բերէ Ս. Գրային սերտողութեան պահերուն, որոնք տեղի կ'ունենան Ասորի Զաղդեական համայնքի Ս. Պողոս Եկեղեցւոյ յարկին տակ, (13050 Vanowen St): Մշակուած են նաեւ ծխական աշխատանքները ընդարձակելու ծրագիրներ, որոնք պիտի իրագործուին հետեւողական կերպով:

Առաջնորդ Սրբազնն ու Ազգ. Վարչութեան անդամները ողջունեցին յանձնախումբին աշխատանքներն ու գնահատանքով արտայայտուեցան անոնց նուիրումին մասին: Կատարուեցան աշխատանքային թելադրանքներ եւ ցուցմունքներ, որոնք կոչուած են դիւրացնելու եւ հեզասահ ընթացքի մէջ դնելու նորակազմ համայնքի կազմակերպական եւ այլ աշխատանքները:

Քրածեշտի պահուն, Առաջնորդ Սրբազնը յուշանուերներ յանձնեց այցելու անդամներուն:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH NORTH HOLLYWOOD PARISH COMMITTEE

As previously reported, at the start of the year the Prelacy established a new parish in North Hollywood to serve the spiritual needs of the large Armenian population in the area. The first Divine Liturgy was celebrated on the Feast of the Nativity and Theophany of our Lord. Divine Liturgy is now celebrated every Sunday afternoon.

A committee has been appointed to oversee the progress of this new parish, serving alongside Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council representatives.

On the evening of Tuesday, January 27th, the committee visited the Prelacy where they were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Council members. The committee members briefed the Prelate and Executive Council members on the development of the parish and reported that a large number of faithful have been attending Divine Liturgy and participating in Bible Study classes which take place on Wednesday evenings.

The Prelate and Council members commended the efforts and dedication of the committee members to the success of the new parish. An exchange of ideas and suggestions also took place to facilitate the work of the committee.

The visit concluded with the Prelate presenting the committee members with mementos.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՑ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Ս.Ը.Ս.Ի ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Երեքամբի, 27 Յունուարի Երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր Տ. Մուշեղ Աղք. Սարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հ.Ս.Ը.Ս.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Ծրչանային Վարչութեան անդամները, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Տիար Մթիւ Աղթինեանի: Պատուիրակութիւնը Ազգ. Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առիթով, նաեւ տեղկութիւններ տալու իրենց յառաջիկայ ծրագիրներուն ու ձեռնարկներուն մասին: Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին ներկայ եղան Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ անդամներ՝ Տեարք Վահե Յովակիմեան, Խաչիկ Երեցեան, եւ Կարօ Էջկիեան:



Հ.Ս.Ը.Ս.Ի

Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին սկաուտական ու դաստիարակչական ծրագիրներ, որոնք կը փափաքին իրականացնել Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող Երիտասարդական միութեանց հետ գործակցաբար: Առաջնորդ Սրբազանը ողջունեց այս ծրագիրը, նկատել տալով, որ

Վեհափառ Յայրապետը 2009 տարին հոչակած է Երիտասարդութեան Տարի, հետեւաբար, զոյգ միաւորներուն առաջադրանքները կը համապատասխանեն իրարու: Այս իմաստով, տարուան առաջին նախաձեռնութիւնը պիտի ըլլայ Տեառնընդառաջի նախատօնակին տեղի ունեցող աւանդական հանդիպումը՝ Առաջնորդ Սրբազանին կողմէ սկաուտական կազմին հիլորնկալումը Ս. Աստուածածին Եկեղեցւոյ յարկին տակ, 13 Փետրուարի Երեկոյեան: Գործակցութեան այլ դաշտ մըն է »Ս. Մեսրոպ Մաշտոց« շքանշանի դասախոսական ծրագիրը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հ.Ս.Ը.Ս.Ի ու անոր ծառայողներուն սերնդակերտ աշխատանքը, միաժամանակ վեր առնելով Երիտասարդութեան Տարուան առիթով յատուկ գործակցութիւն ստեղծելու պատրաստակամութիւնը: Ան նաեւ ողջունելի նկատեց նաեւ մեր միութիւններուն միջեւ հասարակաց կալուածներու մեջ գործակցութեան բացումն ու զարգացումը, որմէ կրնան օգուտ քաղել բոլորը:

Հանդիպումը վերջ գտաւ սերտ գործակցութիւնը նոյն թափով շարունակելու յանձնառութեամբ:

HOMENETMEN REGIONAL EXECUTIVE VISITS THE PRELACY

On the evening of Tuesday, January 27th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from Homenetmen

Regional Executive, headed by Chairman Mr. Steve Artinian. The members had to come to convey their New Year and Christmas well wishes to the Prelate as to well to discuss the recent and upcoming activities they have planned.



The guests expressed their wish for collaboration with the Prelacy youth committee, which the Prelate welcomed, especially considering that H.H. Catholicos Aram I has declared 2009 the Year of the Youth. The first collaborative event of the year will take place on the Eve of the Feast of the Presentation of our Lord to the Temple, a service in which the scouts and youth traditionally participate. Also discussed was the St. Mesrob Mashdots Medal religious program.

The Prelate commended the valuable service of the members and above all their initiative to create opportunities to commemorate the Year of the Youth.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՉ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 27 Յունուարի յետմիջօրեին, Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մեջ ընդունեց այցելութիւնը Հայկական Օսկրածուծի Հիմանդրամի ներկայացուցիչներուն, որոնք եկած էին, ամանորի եւ Ս. Ծննդեան բարեմաղթութիւններու կողքին՝ ներկայացնելու Հիմանդրամի ծրագիրներն ու աշխատանքին ընթացքը: Առաջնորդ Սրբազնին կողքին, հասդիպումին մասնակցեցաւ հոգեշնորհ S. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:



բացումը կը նախատեսուի յառաջիկայ հաղորդ դարձաւ նաեւ Հիմանդրամին

Տոք. Ֆրիտա ճորտընի գիւաւորած պատուիրակութիւնը Առաջնորդ Սրբազնին ներկայացուց յատկապես Հայաստանի մեջ իր հաստատած կեդրոնին շինարարական աշխատանքին մանրամասնութիւնները, նկատի ունենալով, որ նոր կեդրոնին բարեփոխման աշխատանքը մօտեցած է իր լրումին ու անոր Ապրիլին: Առաջնորդ Սրբազնը կարգ մը ծրագիրներուն, որոնց

շարքին՝ տարեկան ձեռնարկը՝ Յուլիսին, ու հանգանակային քայլարշաւ մը՝ Հոկտեմբերին:

Առաջնորդ Սրբազնը ողջունեց Ներկայացուցիչները ու բարձր գևահատեց անոնց հայրենանուեր ու ժողովրդանուեր աշխատանքը։ Ան անդրադարձաւ այս իրողութեան, որ Ազգ։ Առաջնորդարանն ու անոր հովանիին տակ գործող Եկեղեցիներն ու միաւորները զօրակից են Հիմնադրամի առաքելութեան ու ըստ կարելոյն, մասնակցութիւն կը բերեն անոր հանգանակային ու այլ աշխատանքներուն։ Ան յաջողութիւն եւ կորով մաղթեց Հիմնադրամի ծառայողներուն, որոնք այս առաքելութեան լծուած են կամաւոր աշխատանքով։

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազնը Ներկայացուցիչներուն յանձեց Ազգ։ Առաջնորդարանս խորհրդանշող յուշանուերներ։

PRELATE WELCOMES ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY REPRESENTATIVES

On the afternoon of Tuesday, January 27th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Bone Marrow Donor Registry who had come to convey their New Year and Christmas well wishes to the Prelate. Very Rev. Fr. Barthev Gulumian also joined in the meeting.



President of the Registry Dr. Frieda Jordan briefed the Prelate on the upcoming projects of the organization, specifically the progress of the stem cell harvesting center in Armenia which is scheduled to open in April, as well as their annual banquet which will take place in July and the Walkathon in October.

The Prelate commended the representatives and the noble work they carry out through the Registry,

and affirmed that the Prelacy and affiliated bodies continue to support the organization morally and financially.

The Prelate wished them success in all future endeavors and presented them with mementos.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒԹԵՅ ՖՐԵՋՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ 108ԱՄԵԱԿԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, Յունուար 25-ին, Ֆրեջնոյի Սուրբ Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ 108ամեակին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ, ապա Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Եկեղեցւոյ տարեկան ձեռնարկը:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց Եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին սպասարկեց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. S. Վահան Զինյ. Կոստանեան: Ս. Պատարագի Երգեցողութեան մասնակցութիւն բերին Երիտասարդներ:

Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազանը Եկեղեցւոյ

հոգեւոր հովիւն՝ Արժ. S. Վահան Զինյ. Կոստանեանի շնորհեց քահանայական սեւ ծաղկեայ փիլուն կրելու իրաւունք, շնորհուած՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ:

Ապա, Սրբազանը օրուան խորհուրդը Ներկայացնող իր պատգամը տուաւ Ներկայ հաւատացեալներուն եւ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն:

Պատարագէն վերջ, Եկեղեցւոյ տարեղարձին առիթով, հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը Եկեղեցւոյ սրահին մէջ կազմակերպած էին պաշտօնական ճաշկերոյթ եւ տօնակատարութիւն:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Յօր հովանաւորութիւնն ու Ներկայութիւնը:

Յոգաբարձութիւնը այս առիթով պատուեց Երեք անձնաւորութիւններ, Եկեղեցւոյ իրենց մատուցած բազմամեայ ծառայութեան համար, անոնք էին՝ Երեցին Սոսի Կոստանեան, Տիկին Սոսի ճապոյեան եւ Տիար Մայքը Սրապեան:

Օրուան պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Յայրը, Նիւթ ունենալով »Եկեղեցւոյ եւ Ժողովուրդին ծառայելու կարեւորութիւնը«:

Գեղարուեստական յայտագրի բաժինով, Եկեղեցւոյ տարեկան գործունեութիւնը Ներկայացնող տեսաերիզ մը ցուցադրուեցաւ:

Ս. Պատարագին ու յաջորդող ընդունելութեան, Ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաչիկ Երեցեան եւ Վարուժան Տէր Սիմոնեան:

CELEBRATING THE 108TH ANNIVERSARY OF HOLY TRINITY CHURCH OF FRESNO

On Sunday, January 25th, the Prelate celebrated Divine Liturgy at Holy Trinity Church in Fresno in celebration of the 108th anniversary of the parish and presided over the annual banquet.



During Divine Liturgy the Prelate presented parish pastor Rev. Fr. Vahan Gosdanian with a Pontifical Encyclical by H.H.Catholicos Aram I granting him the privilege of bearing an ornamental cope.

The annual banquet took place in the church hall immediately following Divine Liturgy, during which church members Yeretsgin Sossy

Gosdanian, Sossy Jabrayan, and Michael Srabian were honored for their service to the parish.

The message of the day was delivered by the Prelate, the theme of which was the importance of service to the church and community.

A DVD presentation of the past year's activities was also included in the program.

Executive Council members Mr. Khatchig Yeretzian and Mr. Varoujan Der Simonian participated in the Liturgy and the ensuing banquet.
